ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Ք. Երևան, 14 փետրվարի 2020 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) նիստի

Մասնակցում էին՝

Ա. Թորոսյան – ՀՀ առողջապահության նախարար (Խորհրդի նիստը վարող)
Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)
Ռ. Գրիգորյան – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Բ. Պիպոյան – <<Իրազեկ և պաշտպանված սպառող>> ՀԿ ղեկավար (Խորհրդի անդամ)
Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)
Ա. Պետրոսյան - <<ՓՄՁ համագործակցության ասոցիացիա>> ՀԿ կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)
Գ. Ավետիսյան – ՍԱՏՄ ղեկավար
Գ. Սարոյան - ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ
Հ. Ասլանյան- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա. Դանիելյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի շուկայի վերահսկողության և սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման մեթոդաբանության վարչության պետ
Ա. Ավետիսյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի զարգացման ծրագրերի վարչության խորհրդական
Մ. Երիցյան – ՍԱՏՄ իրավաբանական վարչության պետի ժ/պ
Է. Բասենցյան – ՍԱՏՄ ընդհանուր բաժնի պետ
Վ. Հարությունյան – ՍԱՏՄ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Բացակայում էին՝

Տ. Խաչատրյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)
Ա. Առաքելյան - ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)

ՍԱՏՄ կառավարման խորհրդի նախագահի լիազորագրով (կցվում է) նիստը վարեց ՀՀ առողջապահության նախարար Ա. Թորոսյանը: Նախարարը նշեց, որ քվորումն ապահովված է և առաջարկեց քվեարկել օրակարգի հաստատման համար: Նախարարն առաջարկեց փոխել օրակարգային 2-րդ և 3-րդ հարցերի քննարկման հերթականությունը:

Օրակարգը հաստատվեց միաձայն, որից հետո Խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը:

1. <<Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին

(Գ.Ավետիսյան, Ա.Ասոյան, Ա. Պողոսյան, Ռ. Գրիգորյան, Բ. Պիպոյան, Ա. Թորոսյան)

Գ. Ավետիսյանը զեկուցեց, որ նախագծի ընդունումը պայմանավորված է «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջների կատարման, ինչպես նաև ներմուծվող սննդամթերքի լաբորատոր փորձարկումների (փորձաքննությունների) կատարման վերաբերյալ կազմակերպությունների հետ կնքված շրջանակային համաձայնագրերի պահանջների կատարման անհրաժեշտությամբ: **Նախագծի ընդունման դեպքում հնարավոր կլինի կատարած աշխատանքների դիմաց լաբորատոր** փորձարկումներ (փորձաքննություններ) կատարած կազմակերպություններին արտաբյուջետային հաշվից կատարել վճարումներ՝ շրջանակային համաձայնագրով սահմանված կարգով և չափով: Նա նշեց, որ նախագիծը շրջանառվել է սահմանված կարգով:

Ա. Պողոսյանը նշեց, որ նախագծի վերաբերյալ ֆինանսների նախարարությունն իր պաշտոնական տեսակետը կհայտնի, այնուամենայնիվ, առանձնացրեց 2 հարց՝ 1) կա մտավախություն, որ բյուջեի հաստատումը կարող է հակադրվել անցյալ տարի ընդունվածին՝ արտաբյուջետային հաշիվների մասով, սակայն իրենք այս հարցում խնդիր չեն տեսել, նկատի ունենալով, որ այն ըստ էության դեպոզիտ է, պետության կողմից պատվիրակված գործառույթ, 2) տեխնիկական հարց է, բյուջեում անցյալ տարեվերջին եղել է չծախսված մաս, որը նախագծում ներկայացված է որպես դեֆիցիտ, և իրենք առաջարկում են հարցը դիտարկել բյուջեի հոսքերի դասակարգման տեսանկյունից, ազատ մնացած միջոցները գումարել եկամտին:

Ա. Պողոսյանն առաջարկեց օրակարգային հարցը դնել քվեարկության՝ պայմանով, որ կներառվեն ֆինանսների նախարարության առաջարկությունները:

Ա. Թորոսյանին հետաքրքրեց, թե ամփոփված տարբերակին են հավանություն տալու, թե նախօրոք ներկայացված տարբերակին: Ամփոփման ժամանակ հավշի կառնվեն այդ տարբերակները և կներկայացվեն ամփոփաթերթի տեսքով:

Բ.Պիպոյանի կարծիքով, եթե պետք է ուղղումներ կատարվեն, դրանք հիմա պետք է անել:

Ա. Ասոյանի կարծիքով, կարևոր են այս քննարկումները հենց այս փուլում՝ մինչև համապատասխան նախարարական կոմիտեի քննարկմանը ներկայացնելը, քանի որ լինում են դեպքեր, երբ հարցը կոմիտեով հավանության է արժանանում, որից հետո խորհուրդի հավանությանը ներկայացնելիս խորհուրդի առաջարկությամբ այն խմբագրվում է, կամ նախագծերին հավանություն չի տրվում, արդյունքում այդ նախագծերը հետ են կանչվում: Միաժամանակ Ա. Ասոյանը առաջարկեց նախագիծը

մշակելիս հաշվի առնել նախորդ տարիների փորձերը՝ հետագայում նմանօրինակ նախագծերի ընդունման անհրաժեշտությունը բացառելու նպատակով:

Գ. Ավետիսյանը նշեց, որ այս նախագծում հաշվի է առնված անցյալ տարվա փորձը և կարծում են, որ տարվա վերջում վերաբաշխում կատարելու անհրաժեշտություն չի առաջանա:

Ռ. Գրիգորյանն առաջարկեց նախագծի մշակման ժամանակ առաջնորդվել ՀՀ վարչապետի հանձնարարականով և բյուջեի պահուստային ֆոնդից գումար չնախատեսել:

Գ. Ավետիսյանը նշեց, որ այս նախագծով բյուջեից նոր լրացուցիչ հատկացումներ չեն պահանջվում:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 8 կողմ ձայներով որոշվեց.

1) *Հավանություն տալ <<Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առաջարկությունների հիման վրա լրամշակված տարբերակին:*

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հաստիքացուցակին, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկին և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին հավանություն տալու մասին

(Գ. Ավետիսյան, Ա. Ասոյան, Ա. Պողոսյան, Տ. Գաբրիելյան, Բ. Պիպոյան, Գ. Սարոյան, Ա. Թորոսյան)

Գ. Ավետիսյանը հայտնեց, որ ներկայացված տեսքով հաստիքացուցակ ունենալու դեպքում տեսչական մարմինը կարող է լիարժեքորեն ապահովել իր առջև դրված գործառույթները:

Նախարարի հարցին, թե հաստիքացուցակի փոփոխության արդյունքում ֆինանսական ինչ փոփոխություն է կատարվել, կրճատվող հաստիքները արդյոք թափուր են եղել, Գ. Ավետիսյանը պատասխանեց, որ կրճատվողները զբաղեցված հաստիքներ են: Նա տեղեկացրեց, որ աշխատողները սահմանված կարգով ծանուցվել են:

Բ. Պիպոյանն առաջարկեց կրճատման ժամանակ առավել մեծ ուշադրություն դարձնել իրավական հիմքերին՝ հետագայում բողոքարկման դեպքում հիմնավոր փաստարկներ ունենալու նպատակով:

Գ. Սարոյանը նշեց, որ օրենքով քաղաքացիական ծառայողները կարող են չծանուցվել, իսկ մյուս հաստիքները զբաղեցնող անձանց ծանուցվել է սահմանված կարգով:

Տ. Գաբրիելյանի հարցին, թե որն է ռիսկերի կառավարման վարչության գործառույթը, եթե ռիսկի գնահատումը վերապահված է գիտական կենտրոնին, Գ.

Ավետիսյանը պատասխանեց, որ ռիսկերի կառավարման վարչությունը պետք է կատարի գնահատված ռիսկի կառավարում: Միաժամանակ նշեց, որ մարզային կենտրոններում հաստիքների բաշխումը մնացել է անփոփոխ, այն պայմանավորված է մարզերի տարածքների մեծությամբ:

Օպտիմալացմանը վերաբերող հարցի մասին խոսելով՝ Ա. Պողոսյանը կատարեց մի քանի դիտարկում. նախ՝ չի պահպանվել մասնագիտական կազմի և ղեկավար կազմի հարաբերակցությունը: Նա նաև նշեց, որ միջազգային փորձը հուշում է, որ համամասնության լավագույն տարբերակը 7:1 հարաբերակցությունն է:

Համաձայնելով Ա. Պողոսյանի դիտարկմանը, նախարարն առաջարկեց 7-8 աշխատողից կազմված վարչության կազմում բաժնի պետի և վարչության պետի տեղակալների հաստիքներ չնախատեսել:

Խոսելով թունավորման դեպքերին արձագանքելու մասին սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի, առողջապանության և աշխատանքի տեսչական մարմնի և <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից արձագանքելու մասին՝ Բ. Պիպոյանն առաջարկեց ավելացնել արագ արձագանքման բաժնի հաստիքային միավորների թիվը՝ բաժնի համար առաջարկելով սահմանել աշխատանքների իրականացման առանձին ընթացակարգ, 24-ժամյա աշխատանքային ռեժիմ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեսուչն առանց փաստաթղթի չի կարող իրականությունը ֆիքսել:

Ա. Ասոյանը նշեց, որ 5 հաստիք նախատեսված է Երևանի տարածքը սպասարկելու համար, իսկ մարզերում այս գործառույթը պետք է դրվի մարզային կենտրոնների կոնկրետ աշխատակիցների վրա՝ որը կարտացոլվի և տվյալ ստորաբաժանումների կանոնադրություններում, և աշխատակիցների պաշտոնների անձնագրերում:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց հիմնավորումներ հաստիքացուցակի վերաբերյալ:

Ա. Պողոսյանի կարծիքով, ներկայացուցչականությունը կարևոր է, սակայն մարդիկ էլ պետք է ըմբռնումով մոտենան փոփոխություններին, քանի որ երկիրն է որդեգրել զարգացման այդ ճանապարհը, և միջազգային կառույցները համարժեք են արձագանքում փոքր երկրներին բնորոշ այս հարցին:

Ամփոփելով քննարկումը՝ նախարարն առաջարկեց վերանայել հաստիքացուցակը, ֆինանսների նախարարության առաջարկի համաձայն՝ փոխել ղեկավար կազմի և մասնագիտական կազմի հարաբերակցությունը և մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել Խորհրդի էլեկտրոնային քվեարկությանը:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 8 կողմ ձայներով որոշվեց.

1) *Վերանայել հաստիքացուցակը, անվանացանկը և պաշտոնի անձնագրերը:*
2) *Մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել Խորհրդի էլեկտրոնային քվեարկությանը:*

3. Արթուր Շատվորյանի թեկնածությունը Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելուն հավանություն տալու մասին

(Գ. Ավետիսյան, Ա. Ասոյան, Ռ. Գրիգորյան, Տ. Գաբրիելյան, Բ. Պիպոյան, Ա. Թորոսյան)

Գ. Ավետիսյանը ներկայացրեց թեկնածուի կենսագրական տվյալները, խոսեց նրա՝ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնում մեկ տարվա արդյունավետ աշխատանքային գործունեության և ոլորտում դրական փոփոխություններ նախաձեռնելու մասին, և հավելեց, որ տեղակալի պաշտոնում նշանակվելուց հետո կոորդինացնելու է շատ ոլորտներ, այդ թվում՝ տարածքային մարմինների համակարգման և սննդի անվտանգության ոլորտները:

Ա. Թորոսյանը Ա. Շատվորյանին առաջարկեց ներկայացնել իր կենսագրականը և խոսել աշխատանքային գործունեության մասին:

Ա. Շատվորյանը նշեց, որ ավարտել է ԵՊԲՀ-ն, հետո ինտերնատուրան, սկզբնական ժամանակաշրջանում զբաղվել է դեղագործական բիզնեսով, որից հետո գործունեություն է իրականացրել հանրային սննդի ոլորտում, ՀՀ-ում և ՌԴ-ում, որից հետո 2019 թվականից որոշել է զբաղվել պետականաշինությամբ՝ որպես ղեկավարի խորհրդական աշխատելով ՍԱՏՄ-ում: Նա ներկայացրեց իր աշխատանքները Եվրասիական տնտեսական միության և Եվրամիության երկրների հետ համագործակցության ակտիվացմանն աջակցելու, ձկնամթերքի արտահանման ոլորտում խնդիրները վերացնելու ուղղությամբ, և նշեց, որ այս ամենն իրականացրել է Գ. Ավետիսյանի ղեկավարությամբ: Նա նաև հավելեց, որ <<Ձյունիկ>> ընկերությունում սանիտարահամաճարակային վտանգը վերացնելու նպատակով ստեղծված և ՀՀ փոխվարչապետի ղեկավարած միջգերատեսչական աշխատանքային խմբում կոորդինացրել է գերատեսչությունների աշխատանքները, ինչպես նաև եղել է ՍԱՏՄ ղեկավարի հրամանով ստեղծված սպանդանոցային գործունեության աջակցման աշխատանքային խմբի ղեկավարը:

Ա. Թորոսյանի հարցին, թե հանրային սննդի ոլորտում կոնկրետ ինչ աշխատանքներ է իրականացրել Ա. Շատվորյանը պատասխանեց, որ հիմնականում զբաղվել է ռեստորանների և սրճարանների բիզնեսով:

Ա. Ասոյանը ներկայացրեց 3 հարց, որից մեկը ճշգրտող.

1. Արդյոք պաշտոնի նշանակվելու դեպքում նախկինում ծավալած բիզնես գործունեությունը չի առաջացնի շահերի բախում:

2. «Սպայկա» ընկերության հետ կապված խնդիրներով զբաղվել է, և եթե այո, որն է եղել իր դերակատարումը,

3. Սպանդանոցների հետ կապված հարցի մասին ինչ պատկերացումներ ունի, մինչև հուլիսի 1-ը սահմանված ժամանակահատվածում ոլորտում առկա խնդիրները լուծելու ինչ հստակ քայլեր է առաջարկում իրականացնել:

Ա. Շատվորյանը սկսեց պատասխանել վերջին հարցից՝ ներկայացնելով որ ինքը սպանդանոցային գործունեության աջակցման աշխատանքային խմբի ղեկավարն է, այս հարցում աշխատանքները սկսել է 2019թ սեպտեմբերից, հանրապետության բոլոր մարզերում խորհրդատվական աշխատանքներ է իրականացրել շահառուների հետ և իր կարծիքով վերջնաժամկետն իրատեսական է, աշխատանքները պետք է կատարվեն և կկատարվեն, սակայն կան մի շարք խնդիրներ, որոնք չեն կարող լուծվել միայն ՍԱՏՄ կողմից, դրա համար իր կարծիքով պետք է ստեղծել միջգերատեսչական

աշխատանքային խումբ, ժամկետը՝ միչև հուլիսի 2-ը, որպեսզի ծագող հարցերը արագ լուծումներ ստանան:

Ա. Ասոյանի 2-րդ հարցի վերաբերյալ Ա. Շատվորյանը նշեց, որ <<Սպայկա>> ընկերության հետ կապված խնդիրներով չի զբաղվել, բացի ռուսական կողմի հետ նամակագրական կապից:

Գ. Ավետիսյանը նշեց, որ ինքն անձամբ է զբաղվել <<Սպայկա>> ընկերության խնդիրների լուծմանն աջակցելու հարցերով:

Ա. Շատվորյանը նաև նշեց, որ Հայաստանի Հանրապետության տարածքում և որևէ այլ երկրում բիզնես գործունեությամբ չի զբաղվում, ուստի շահերի բախում լինել չի կարող:

Ռ. Գրիգորյանի՝ քաղաքացիության մասին հարցին Ա. Շատվորյանը պատասխանեց, որ ինքը երկքաղաքացի է:

Ռ. Գրիգորյանը ներկայացրեց գործող օրենսդրությամբ երկքաղաքացիության հետ կապված իրավական կարգավորումները և նշեց, որ քանի դեռ չկա ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու մասին ՀՀ նախագահի հրամանագիրը, նա համարվում է ՀՀ քաղաքացի: Նա հավելեց, որ խնդիր չի տեսնում պատրաստված կադրին պետական աշխատանքում ներգրավելու հարցում:

Գ. Ավետիսյանը նշեց, որ քանի դեռ նա ունի ՀՀ անձնագիր, նա ՀՀ քաղաքացի է:

Ա. Թորոսյանը փաստեց, որ <<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքում նշված է, որ վարչական պաշտոնում կարող է նշանակվել ՀՀ այն քաղաքացին, ով ունի բարձրագույն կրթություն, իսկ թեկնածուն ՀՀ քաղաքացի է:

Բ. Պիպոյանին հետաքրքրեց, թե տեսչական մարմնի որ ոլորտի համակարգման աշխատանքներն է նախընտրելի իր համար, Ա. Շատվորյանը պատասխանեց, որ այդ հարցը պետք է որոշի ղեկավարը: Սակայն Բ. Պիպոյանի պնդմանը պատասխանեց, որ թեև տիրապետում է բոլոր ոլորտներին, այնուամենայնիվ, դեմ չէ միջազգային հարաբերությունների, սննդամթերքի վերահսկողության, ինչպես նաև սահմանային վերահսկողության համակարգմանը:

Բ. Պիպոյանն առաջարկեց տեղակալների միջև ոլորտային աշխատանքների բաշխում կատարելիս ուշադրություն դարձնել, որ ոչ մի ոլորտ դուրս չմնա մասնագիտական վերահսկողությունից: Նա ներկայացրեց, որ ՍԱՏՄ ստեղծման հայեցակարգում դրված է եղել այն գաղափարը, որ եթե պետը որևէ ոլորտի ներկայացուցիչ է, տեղակալներց յուրաքանչյուրը պետք է միյուս ոլորտներից մեկի մասնագետ լինի, և ղեկավարության ուշադրությունը հրավիրեց այս հանգամանքի վրա:

Անդրադառնալով տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների լիազորությունների բաշխման հարցին՝ Ա. Ասոյանը պարզաբանեց, որ <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքի պահանջով տեսչական մարմնի՝ ստուգումներով զբաղվող տեղակալին չի թույլատրվում համակարգել ռիսկերի ոլորտը,քանի որ այստեղ շահերի բախում կա: Քաղաքացիության մասին խոսելով՝ Ա. Ասոյանը նշեց, որ կառավարման խորհրդի կողմից Ա. Շատվորյանի թեկնածությանը հավանություն տալու դեպքում ՀՀ վարչապետի աշխատակազմի համապատասխան

ստորաբաժանումները սահմանված կարգով կստուգեն Ա. Շատվորյանի՝ տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնի համապատասխանության հարցը՝ մինչև ՀՀ վարչապետի նշանակմանը ներկայացնելը:

Տ. Գաբրիելյանի հարցին, թե տեղակալի պաշտոնում այլ թեկնածուների միջև ընտրություն եղել է արդյոք, պատասխանեց Ա. Թորոսյանը՝ պարզաբանելով, որ <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքի պահանջով՝ տեսչական մարմնի ղեկավարն է առաջարկում իր տեղակալի թեկնածուներին, իսկ թե ինչ կարգով, որոշում է ինքը՝ ղեկավարը, խորհրդի հարցը միայն թեկնածությանը հավանություն տալն է:

Գ. Ավետիսյանը հավելեց, որ իր կողմից հաշվի են առնվել նաև այլ թեկածուների տվյալները:

Նախարարի առաջարկությամբ Խորհրդի անդամներն անցան քվեարկության:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 7 կողմ և 1 դեմ (Ռ. Գրիգորյան) ձայներով որոշվեց.

1) *Հավանություն տալ Ա. Շատվորյանի թեկնածությանը՝ ՍԱՏՄ ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակման համար,*
2) *ՍԱՏՄ ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակման համար Ա. Շատվորյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին:*

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ _____

«06» 02. 2020թ

Լիազորագիր

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1000-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N2 հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետը՝ լիազորում եմ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ Արսեն Թորոսյանին վարել 2020 թվականի փետրվարի 14-ի Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ